

եւ փրկաւէտ առիթները՝ աշխարհակալութիւններ ընելու եւ պատերազմելու բարբարոսաց դէմ, որպէս զի միւէք ձեր զէնքերը քրիստոնէութեան ծոցը : Վաթսուն տարի է որ շարունակ կը գողնան, կը կողոպտեն, հիմնադատակ կ'ընեն, կ'այրեն եւ քաղաքներ կը կործանեն երկու կողմանէ ալ . աւարի կ'առնուն զաշտական երկիրներ, անմեղ գիւղացիներ կը կեղեքուի թագաւորաց կռիւներուն համար, եւ անվերջ պատերազմաց կը մատնուի : Եւ այս ամէն բանէն ինչ իրական արդիւնք յատա՞յ եկաւ, բայց եթէ ահաւոր արիւնհեղութիւն : Ես կ'աղաչեմ ձեզ, ըսէք ինձ, երկու կողմէն ո՞րն աւելի շահաւոր եկաւ : Եթէ տրուէին այդ կարծեցեալ շահերը այնպիսի անձանց՝ որք կարենան ճշգրտութեամբ համեմատել շահը վնասուց հետ, ոչ ոք ձեզմէ պիտի ուրախանայ իւր յաղթութեանց վրայ, այլ պիտի ստիպուի խոստովանիլ թէ անոնք իրեն շատ սուղի նստած են . դուք իսկ պիտի խոստովանիք, թէ զանոնք շահած էք ի ձեր թշուառութիւն, թէ այն ամէն պտուղք քիչ մը ժամանակ տեւեր են, եւ այնչափ առած տեղերէն հազիւ ձեզի մէկ հատ միայն կը մնայ՝ ի փոխարէն այնչափ նեղութեանց եւ թափուած արեան : Գաղղիացիք թերեւս պիտի կարենան պարծիլ ուրիշ զարմանալեօք . բայց խօսքս համառօտելու եւ ձեր շահերուն հակառակ վիճաբանութեանց մէջ չի մտնելու համար, վասն զի աւելի օգտակար է ըսել զճշմարիտն քան շողմեղ թագաւորաց կիրքերը՝ որ շատ իսկ ներողամիտ են, կը համարձակիմ ըսելու ձեզ, պերճափայլ իշխանդ, թէ փառասիրութիւնն է որ զձեզ կը դրդէ ի պատերազմ՝ տիրելու համար Գաղղիոյ : Բայց եթէ հին թագաւորք ամէն ժամանակ հաստատեր են անոր ժառանգութիւնը իրենց ցեղին մէջ, եւ եթէ ինքնակալաց զօրութիւնը մասնաւորապէս իրենց հպատակաց սիրոյն եւ հնազանդութեան մէջ կը կայանայ, կարծեմ թէ այն թագը անխախտելի է բոլոր ձեր յարձակմանց դէմ, եւ ձեզ լաւ խորհուրդ մը կու տամ զազբեցընելու արեան հեղեղը, եւ գոհանալու ձեր օրինաւոր իշխանութեամբ : Ուստի ձեր բոլոր այդ պահանջներն ստուգիւ սերմանք են եղեռնաւոր ատելութեան մը, եւ հազար պատերազմունք անօգուտք ապագային, կամ աւելի ճիշդն ըսել՝ արգելք են ծրագրի մը՝ որ կրնար ձեզ փառամատոյց եւ օգտաւէտ ըլլալ, եթէ զարձնէիք զէնքերնիդ՝ երկու կողմանէ ալ՝ յահարկութիւն թշնամեաց խաչին : Դուք պիտի յաղթէիք անշուշտ այս մեր փրկութեան սուրբ նշանին տակ, եւ պիտի խորտակէիք յայնկոյս ծովուն մնացած թշուառ քրիստոնէից լուծը եւ շղթաները, որ ձեզի ձեռք կը կարկառեն, եւ կը յուսան իրենց ազատութիւնը ձեր միաբան օգնութեանէն՝ որուն կը սպասեն օրէ օր (1) : »

(1) Տե՛ս Բագմալեպի 1897 թ. մարտի Յաւելումը : Հմմտ. Սեկ-Դընիի կրօնաւորիկ ժամանակագիրքը, հս. Ա. եր. 423—427 :